

չեմ՝ կասկածու՞մ: թէ դու քո խոհականութեամբ
 և յաւետ ցանկութեամբ, որ մեր սոհմի փառքը
 բարձրանայ՝ կը գոցես իմ վճիռը: . . . Եւորին
 Սրբութեան բարեհաճ շնորհիւ ես այժմ մի նոր
 ծանապարհի վերայ եմ՝ որ որ իմ բոլոր զօրու-
 թեամբ պիտի աշխատեմ: որ սոհմիս ըղձերի և
 գրութեան համեմատ վարուիմ և ըստ ամենայնի
 նպատաւորեմ նորա պատուի և փառքի աճեցման: .
 Այնուպէս պայծառութեամբ և վիպում մի այլ նա-
 մակ նոյնպէս 1837-ին գրած, թէ ինչպէս զօրա-
 ռուր է եղել Պէշչիկի սնափառութիւնը, նորա առաջ
 մղուելու ձգտումը և թէ ինչ երկրորդական տեղ
 է ունեցել նորա «Տօգեորական կոչման» կամ աստ-
 ուածարանական ուսմամբ ոգևորուելու փոյթը: Սո-
 վորութիւն ունենալով իմ վիճակիս մասին ազգա-
 կաններէրցս ոչինչ չթողցնելու, անկեղծօրէն հա-
 ւատացնում եմ քեզ, որ այն օրումնից, երբ ես
 հօրս ցանկութեան համեմատ այս նոր ասպարիզիս
 մէջ ոտք կոխեցի, միշտ հետամուտ եմ եղել միայն
 մի նպատակին. ես ուզեցել եմ՝ իմ բոլոր զօրու-
 թիւններովս քանալ և գոյնի վարքով ընթանալ,
 որ նուիրագրական աւագութեանց աստիճաններով
 առաջ գնամ և ընդ նմին նաև մեր սոհմի արժա-
 նեաց յարգը աւելի ևս բարձրացնեմ: Եթէ այս
 նպատակիս հասնեմ, կարծեմ, թէ մեր հօր խոր-
 հօրքների համեմատ գործած պիտի լինիմ: Եւ յի
 խորհուրդները ինձ համար օրէնք են և անշուշտ
 խիղճս տաղնապի մէջ կը լինի եթէ կենացս մէջ
 երբ և իցէ անոնց դէմ մեղանշեմ: Բայց քանի
 երեսասարդ եմ, անտարակոյս իմ առջև գծած աս-
 պարեզս այնպէս կընթանամ, որ կարողանամ մեր
 սոհմի պատիւը շահել, եթէ ի հարկէ վարքս ան-
 բիժ մնայ և զօրաւիգն պաշտպանութիւն վայելեմ,
 որ ինչպէս ինքզ զիտես: Հաոյմում երկու անհրա-
 ժեշտ պայմաններ են՝ անսայթաք և արուպ արուգ
 բարձրանալու համարս:

Եհա այս է Պէշչիկ անձնաւորութեան կե-
 նաց և ձգտման ստոյգ պատկերը: Ինչպէս որ այդ
 ձևանում է իւր վաղագոյն նամակներէրց:

Ս. Ս.



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱՄԻՆ:

GRÉGOIRE DE TOURS-ի ՄԵԿ ԳԼՈՒԹԵՆ ՎԵՐՆՅ,
 ԱՐԵՒԵԼԻՔԻ ՊԱՏՄԱԹԵՐԵՆ ՄԱՐԿՆ:

րանի այս սարուան տարեցոյցը * կը պարու-
 նակէ այսպիսի վերնագրով հատուած մը. Sur
 un chapitre de Grégoire de Tours relatif à l'his-
 toire d'Orient: Եօղուածը՝ որ կը կրէ ծանօթ
 բանասէր A. Carrière-ի ստորագրութիւնը կը
 պարունակէ վեց էջ քննութիւն մը հայոց ա-
 պստամբութեան ընդդէմ պարսից՝ յամին 571:
 Նոյն տարեցոյցը լինելով համալսարանին և
 համալսարանի աշակերաններուն յատուկ մաս-
 նական զիրք մը՝ ի հարկէ նոյն բանասէրին յօ-
 գուածն անձանօթ պէտք է մնայ հայ բանա-
 սիրական շրջանին: ուստի յարմար գտանցի
 նոյնը թարգմանութեամբ ծանօթացնել: Եօ-
 գուածը կսկսի այսպէս.

«Grégoire de Tours իր Փրանկներու պատ-
 մութեան մէջ (Histoire des Francs) գրած է մի
 քանի տեղեկութիւններ թիւ գանդական կայս-
 րութեան մէջ իւր ժամանակ պատահած
 անցքերու մասին: Նա կը պատմէ կարևոր
 դէպքեր՝ քիչ կամ շատ մանրամասնութեամբ,
 բայց առանց երբէք շարունակեալ պատմու-
 թիւն մը ընելու: Իր պատմութիւնը միշտ
 հատուածական, մասնական և վիպական գոյն
 ունի. շատ հոգ շատ իր դէպքերը ժա-
 մանակագրական ամբողջութեան մը մէջ մը-
 ցնելու: Իր սուած տեղեկութիւնները միշտ
 թանկագին են որովհետեւ այն դէպքերուն
 շատ մտախի ժամանակի մը մէջ գրուած են
 խնդիր է թէ այս տեղեկութիւնները սալոյց
 են: Այս մասին քննադատութիւնը երբեմն
 բաւական խիստ գանձուած է. ինձ կը թուի
 թէ Գրիգորի հեղինակութեան պաշտպաննե-
 րը խնդրին այս կողմը ի գուր անոր պատա-
 վաններուն թողած են: Հետեւեալ ասպարով
 չեմ համարձակիր բնու խնդրին վճուական
 լուծում տալ, բայց Փրանկոց պատմու-
 թեան մէկ գլխուն տեսակ մը մեկնութիւն
 կցելով կը յուսամ թէ պիտի կարենամ ցուց-
 նել թէ ինչ տեսակ լին գործածուած ասպար-
 ները յայտնել անոնց ծագումը որով կարելի
 կըլինի դնահատել անոնց արժէքը: Նոյն աշխա-
 տութիւնը կատարելով ուրիշ գրութեան հա-
 մար՝ զորոնք համասօսի պիտի ամփոփեմ

* Annuaire de l'Ecole Pratique des Hautes— Etudes,
 1898. էջ 5—23:

միայն կարճեմ պիտի հասնինք նոյն եզրա-
կայտութեան: Յամենայն դէպս գոնէ դրական
հաստատութիւն մը բերած պիտի լինիմ այն
դէպքին՝ որ մինչև այժմ Tours-ի եպիսկոպո-
սին գլխէն միայն յայտնի էր: և ստով սակո-
ծած պիտի լինիմ նորատաւ որ նախարան մը
Արեւելքի պատմութեան մի քանի ուրիշ ման-
րամանութեանց՝ որոնք նոյն պայմաններու
տակ կը ներկայանան մեզ:

Փաստկաց պատմութեան Գ. գրքին 10.
գլուխը կը բաժնուի իրարմէ շատ սարքեր չորս
մասի կամ հասուածներու: որոնք բոլորն ալ
Յուստինիոս Բ.-ի թագաւորութեան կը պատ-
կանին (565—578):

Ա. Յուստինիոսի նկարագիրը մինչև ա-
նոր խելագարութեան վայրկեանը՝ երբ կայսե-
րական իշխանութիւնը կը յանձնէ Տիրերիո-
սի՝ Կոյսր արտոնող (574-ի վերջը):

Բ. Սիգըրերտ (Sigebert) թագաւորը Յուս-
տինիոսին կուղարկէ երկու դեսպան՝ որոնք
կը գտնան յաջորդ սարին:

Գ. Սիւրիոյ աւերման հասուածը Խոս-
րովի՝ 1 րանակներով (573):

Դ. Թէ ինչպէս Պարսկահայք ապսամ-
բեցան Պարսից թագաւորին դէմ և Յուս-
տինիոսի օգնութիւնը խնդրեցին (571):

Գրիգորի բնագիրը պատմուած այս գա-
նազան դէպքերուն մէջ ոչ մի յարաբերու-
թիւն կը գնէ: Միայն յայտնի է թէ Սիւրիոյ
աւերումը Սիգըրերտի գեսպաններուն գար-
ձէն յետոյ տեղի ունեցած է (post haec, յետ
այսորիկ): Ուրիշ ոչ մի ժամանակագրական
տեղեկութիւն չկայ:

Յառաջարանական այս խօսքերէն ետ
յօդուածագիրը կսկսի քննել իւրաքանչիւր հա-
տուածը: համեմատել զանոնք ժամանակակից
ուրիշ պատմագիրներու վկայութեան հետ և
երեւան հանել Գրիգորի արժէքը Թորոնիով ա-
ռաջին երեք հասուածներուն հետադասու-
թիւնը՝ որ մեզ համար առանձին կարևորու-
թիւն չունի: կանցնինք չորրորդ հասուածին:
այն է Պարսկահայոց ապսամբութիւնը: Այս-

տեղ նախ մէջ կը բերուի լատիներէն բնա-
գիրը և անոր ֆրանսերէն թարգմանութիւ-
նը՝ որ է՝

Ոսկ Պարսկահայեր եկան Յուստինիոս
կայսեր մօտ բերելով մետաքսահիւս գոր-
ծուածներու մեծ քանակութիւն մը խնդ-
րեցին անոր բարեկամութիւնը և պատմեցին
իրենց տաւելութիւնը պարսից թագաւորին
դէմ: Սորս կողմէն պատգամաւորներ եկած
էին և բոսած էին. «Թագաւորական ինամա-
տարութիւնը կուզէ իմանալ թէ ձեր գլխած
դաշինքը հաստատուն պիտի պահէք»: Երբ
նորս պատասխանեցին թէ ճշդիւ պիտի կա-
տարին իրենց խոստումը: պատգամաւորներն
ըսին. «Եթէ դուք պաշտէք Կրակը՝ զոր ինքը
թագաւորը կը պաշտէ, յայտնած կը լինիք
թէ պիտի պահպանէք իր բարեկամութիւ-
նը: Ժողովուրդը պատասխանեց թէ այսպիսի
բան մը երբեք չպիտի բնեն. և եպիսկոպոսը՝
որ այնտեղ էր, աւելցուց. «Ինչ Աստուածու-
թիւն կայ կրակին մէջ, որ զայն պաշտենք:
Զոր Աստուած սակցծեց մարդոց գործածու-
թեան համար, որ կը վասի նիւթով ջրով կը
չիջանի կայրէ մերձակայ բանը և կը մարի
առանց նիւթի»: Մինչդեռ եպիսկոպոսը այս
և սոր նման խօսքեր կըսէր, պատգամաւոր-
ները զայրացած՝ թշնամանեցին զայն և ծե-
ծեցին: Ժողովուրդը՝ անտնելով իր արինաշա-
ղախ եպիսկոպոսը, յարձակեցաւ պատգամա-
ւորներուն վրայ բռնեց զանոնք և սպաննեց:
յետոյ ինչպէս ըսինք, զիմեցին կայսեր բա-
րեկամութիւնը խնդրու»: *

Գրիգորի պատմածը Պարսկահայոց ա-
պսամբութիւնն է՝ որոնք 571-ին հետա-
ցան պարսիկներէն և մտան հռովմէական զե-
րիշխանութեան տակ:

Սախս ինչ պէտք է իմանայ պարսկահայ
բառով: Շատ ժամանակի ի վեր Հայաստանը
երկու մասի բաժնուած էր. անգրեկաբառեան
ընդարձակազոյն արեւելեան մասը կը կոչուէր
Մեծ Հայաստան, արեւմտեան մասը՝ որ կը
գտնուէր գեալին մջ եղիբը, կը կոչուէր Փոքր

** Բնագիրը անուած է Arndt-ի հրատար-
կութենէն, ի Monumenta Germaniae historica (Scripto-
res rerum merovingicarum, Ա. Հատ. էջ. 1):

1. Այն և նորով Ա. Նուշի րփամ (531—578):

Հայաստան: Յուստինիանոս 536 թուին Հաստատեց Չորրորդ Հայոց դաւար Եփրատի ձախ եզերքին վրայ հետեւարար Մեծ Հայոց մէջ: 2 Այս ժամանակէն սխեւալ կերեւի Պարսկաստան հոչումը որով կը նշանակուի Հայաստանի պարսից գերիշխանութեան տակ դանուած մասը: 3 Այս կոչման կը հանդիպինք առաջին անգամ Պրոկոպիոսի մէջ՝ որ Հայաստանը Պարսկաստանէն որոշ կերպով կը դանդաղանէ: 4 և կը թուի թէ 2-րդ արտ. վերջերը այս էր ընթացիկ և սոփրական բառը: Գոնէ ժամանակակից հեղինակներու՝ որ 571-ի ազատամբութեան վրայ կը խօսին: 5 մեծագոյն մասը գործածած է զայն Բասին գործածութիւնը շուտ խափանեցաւ: 6

Հայոց այս ազատամբութիւնը ոչ միայն Արեւելքի այլ նաև Տիեզերական պատմութեան մէջ կարևոր անդք մըն է: Եւ արդարեւ, եթէ ոչ միայն գոնէ զիստօր պատճառ մը եղաւ այս Յունական կայսրութեան և Պարսկաստանի մէջտեղ լինաման թեան վերակերպուն յամին 572: 7 Եւ այս կատարի կտիւր՝ որ Մօ-

2. Տես Հ. Գեղցրի յառաջարանը իր Գէորգ Կիւրացուի Orbis Romanus-ի քրտնչելի Տրատարակութեան մէջ (Trubner, 1890), էջ. ԽԶ և շար.

3. ΟΙ ΤΗΣ ΠΛΑΤΗΣ ΜΕΓΑΛΗΣ ΑΡΜΕΝΙΑΣ ΏΣΤΕΡΟΝ ΔΕ ΠΕΡΟΑΡΜΕΝΙΑΣ ΕΠΟΝΟΜΑΘΕΙΣΤΕ... Եւագրիոս Ե. 7:

4. De bello Persico, Ե. 10:

5. Միայն Թէոփանոս Բիզանդացի և Յովհաննէս Եպիփանիացի ունին Ἀρμένιοι (Fragm. histor. grac. Գ. 271 և 274), Միւսներն ունին Περοαρμενία, Ἀρμένιοι Περοαι (Եւագրիոս Ե. 7), Περοαρμενία, Περοαρμένιοι (Ménandre Prof., Fragn. histor. gr. Գ. 249), Ասոր. ܣܘܪܝܝܘܐ ܠܘܪܝܐ, Յովհաննէս Եփեսացի, Բ. 18—24. վերջապէս Grégoire de Tours, մեր ուսումնասիրած հատուածին մէջ՝ Persi Armeni. Corbie-ի ձեռագրին (Տրտրի. Omont, էջ 131) Persiani ընթերցուածքը սխալ է անշուշտ, եթէ սակայն չէ կարելի կարգալ Persia[r]me Jui.

6. Մեր այս նշանակած Պարսկաստանը պէտք չէ ընաւ շփոթել Հայ աշխարհագիրներու Պարսկաստանը գաւառին հետ՝ որ բոլորովին ուրիշ բան է. Լմմա. Saint-Martin, Mémoires sur l'Arménie, Ե. 178:

7. Καὶ τοῦτο μάλιστα γέγονε τῆς τῶν Περοσῶν πρὸς Ἱσπανίαν ἀποσθῶν κατὰ τὴν ἀπὸ τῶν Թէոփանէս Բիզանդացի, Fragn. hist. gr. Գ. 271.— Լուսեր 6-րդ. Περοσας ἀνεργάτη πόλεμος. Եւագրիոս Ե. 7:

րիկի ժամանակ քանի մը սարքի միայն ընդհատուեցաւ: տեւեց մինչև այն ատեն՝ երբ երկու կայսրութիւնները՝ այնքան երկար մաքաւամենքի, ուժասպաս, գեւ. առ գեւ. զըտնուեցան նոր թշնամի մը՝ որուն անկարող գանուեցան վճարական գիւնադրութիւն մը ընկրու: այն է մահմադական արարները: Բայց շատ աւելի գիւրին է այս գեւաքին կարևորութիւնը հաստատելը ցուցնել անոր անմիջական և հետագայ հետեւները, քան թէ յայտնել քիչ կամ շատ ստուգութեամբ ինչ որ կանցնէր Դուսինի Պարսկաստանի մայրաքաղաքին մէջ: 8 Արիւրներ չեն պակսիր.— կան յունական ասորական և հայկական ագրիւրներ, առանց հաշուելու Tours-ի կարևորութիւնը:— սակայն իրարու համաձայն չեն միշտ: Բայց համեմատելով դանուք և իւրաքանչիւրին տարով իրական արմէքը կարող ենք գնել հետեւալ ամփոփումը՝ որ պատմական ճշմարտութենէ շատ հետի չէ:

Սուրէնա՞ անուն պարսիկ կուսակալ մը կը նկատուի քրիստոնեայ հայերը և կը ջանար տարածել անոնց մէջ կրակապաշտութիւնը՝ ինչ որ տեղի կուտար մեծ զգոհութեան: Յուզումն իր գերադոյն աստիճանին հասաւ երբ կուսակալը Դուսին մայրաքաղաքին մէջ սարուշան մը կանգնելու ծրագիրը յղացաւ: Ժողովուրդը՝ զրդեալ կաթոլիկոսէն և միւս կղերականներէն ինչպէս նաև Վարդան անուն նոստարարէ մը՝ որ անձնական թշնամանց վրէժը չուծել կուզէր, ազատամբեցաւ Վարդանի առջնորդութեամբ և կոտորեց թէ կուսակալը և թէ պարսից պահապան զօրքը: Բայց Պարսից վրիժառու վերադարձին գեւ. ազատասան մը դանդաղ համար իսկոյն Հայերը Կասանդոնուպոլիս ուղարկեցին կաթոլիկոսը և մի քանի նոստարարներ՝ իրր պատգամաւոր, որոնք Յուստինիանոս Բ. կայսեր օգ-

8. Յովհ. Եփեսացի, Բ. 18:

9. Կամ Սուրէն պոսինըն Սուրէնեան նշանաւոր ազատամեծ անգամ մը (Ե. Պարիէրի Արշարու գրոյցը, Արեւելեան ինքնագրաւորմանի նոստարակալի մէջ, էջ 392). Եւագրիկի պատմութեան համեմատ (Տիգրիս 1885, էջ 84) այս անձը կը կոչուէր ճիհր—Վշնասպ:

նույն թիւը պատի խնդրէին և միեւնոյն ժամանակ՝ յանուն ժողովրդին՝ երկիրը պատի մըտցնէին հոգովէական գերիշխանութեան տակ: Կայրը զանոնք իր պաշտպանութեան տակ առաւ, ինչ որ՝ մի քանի անօգուտ բանակցութիւններէ վերջ, ճնաւ պարսից զէմ պատերազմը (572-ի վերջը):

Թոր յուզում առաջ բերաւ պատգամաւորներու ժամանումն ի Կոստանդնուպօլիս քրիստոնէայ ազգի մը կողմէ՝ որ իր սերը կը յայտնէր կայսրութեան: Եովհաննէս Եփեսացի որ այն ժամանակ մայրաքաղաքը կը գրաւուէր, կը պատմէ թէ Եռստախնոս ինչպիսի փոռաւ որ ընդունելութիւն ըրաւ Դուինի կաթնով գիտական և անոր ընկերակիցներուն: և զանոնք պարզեցնելով լիացուց: 10 Ինչ որ մեզ շատ աւելի օգտակար է, այն է թէ բաւական ընդարձակօրէն մէջ կը բերէ նա կաթնով գիտական հրատարակոյն ճառը «հաստատման» ցեպ կրկնմամբ, ի մտին այն պարմաններուն՝ որ տեղի տուին պարսիկ մարդոցնին սպանման: 11 Դժբախտաբար կը թուի թէ, ասորի եպիսկոպոսը իր յիշատակները մի քանի ասորի ուշ գրի առած է: 12 և զէպքերուն ընթացքը շատ աւելի պարզ ձևով յայտնուած է: 13 Ամէն ինչ վերագրուած է Դուինի ասորու շանին շինութեան որ կը թուի թէ ասորստամբութեան միակ պատմաուն կրած է: Ծշմարիտ է որ Եովհաննէս Եփեսացին կաւելցնել թէ կաթնով գիտարար ազգի շատ բաներ ևս պատմեց Կոստանդնուպօլսոյ մէջ (Գ. 22):

Արդ եթէ Grégoire de Tours-ի պատմութիւնը համեմատենք ասորի պատմոյթի վայրէջքին հետ տեղերէ կը տեսնուի թէ երկուքին ազդիւրը նոյն է: Նախ զիստար զէպքերը նոյն են: Պարսից թագաւորը կուզէ հայերը բռնի կրակապաշտ բնել: Աստուածարանակուն վիճարանութենէ մը ետք՝ որուն ըզը

տարրերը զի բաւ կարելի է զանել հայ մատենագիրներու մէջ, 14 ապաւանքութիւն մը կը ծագի՝ և սակեւ առաջ կուզայ պարսից թագաւորին ներկայացուցիչներուն կատարածը: Ենայ պատմութիւնը կը զիմեն «Եռստախնոս կայսեր բարեկամութիւնը խնդրելու»: Երկու պատմութեանց մէջ զանուած միակ տարրերութիւնն այն է, որ ասորու շանի շինութեան ընդգիմագրութեան տեղ Գրիգոր կը գնէ, կրակապաշտութեան զէմ հասնուած մը: Սակայն Դուինի ապաւանքութիւնը բաւական ժամանակ տեղուն պատմաաւ: 15 ի հարկէ բազմաթիւ այսպիսի վիճարանութիւններ տեղի ունեցած են ժողովրդէ քրիստոնէայ կրկրականներու մէջուց:

Ուրեմն այն տեղեկութիւնները՝ զորս Tours-ի եպիսկոպոսը կը հաղորդէ քիչ կամ շատ համառօտութեամբ Պարսիկահայոց ապրտամբութեան մասին, անկասկած պօլտական ազդիւրէ են: 16 և առաջ կուզան այն պատմութիւններէն՝ զորս հայ պատգամաւորները մի քանի տարի կայսերական մայրաքաղաքին բնակիչներուն կը պատմէին: 17 Միւշէ Եովհաննէս Եփեսացոյ Եկեղեցական պատմութեան հրատարակութիւնը՝ Փրանկաց պատմութեան Գ. 40 գլուխը միակ վաւերագիրն էր՝ որ Դուինի խառնակութեանց կուտար իրենց իրական նկարագիրը, այն է ժողովրդական ապրտամբութիւն մը՝ կրճական խնդրի մը պատմաաւ արժարձուած: 18

Հրաւայ Ե. Ամստան:



14. Մանասանց Եղիշէի և Եղնկայ մէջ.
 15. Յոգէ. Եփեսացոյ Բ. 20.
 16. Արդէն venerunt բառը կը յայտնէ զայս:
 17. Ըստ Եովհ. Եփեսացոյ (Բ. 22) կաթնով գիտարար շինարարձու էր երկիրը և երկու տարի վերջ յանձնակցաւ Պօլսոյ մէջ.
 18. Հմմտ. Ս. Մարտէի զիտարութիւնը իր հրատարակած Lebeau-ի Histoire de Bas-Empire-ի մէջ, հատար Թ. էջ 87, թիւ 4. Հայոց հնագոյն վկայութիւնը, այն է Սերէոս այն զէպքերէն մէկ զար վերջն է և շատ անկատար տեղեկութիւն կուտայ այս մասին Սեր. աղպ. Պատկ. էջ 26.

10. Բ. 18. Գ. 11.
 11. Բ. 18—23;
 12. Բ. 15 զէպքը՝ որ իր պատմութենէն գրեթէ անմիջապէս առաջ գրուած է, 577 թուականը կը կրէ:
 13. Թագաւոր յայտնի անկարելութիւնները Եռստախնոսի հաղթանաց մասին միւրնակներուն էմ՝ որ 571-ին նոր սկսած էր: